Ð²Ú²êî²ÜÆÐ²Üð²äºîàôÂÚ²Ü Î²è²ì²ðàôÂÚàôÜ
GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATION

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Ուրբաթ, 30 ապրիլի 2010 թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 15 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել եւ հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝«Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցում 2-րդ փուլ», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարիամյանի օրիորդաց դպրոցի նախագծման փորձաքննություն» եւ «Շուշիի ջրանցի և կոյուղու վերակառուցման նախագծման փորձաքննություն», ինչպես նաեւ «Շիրակի մարզի Արթիկ քաղաքի N 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կահավորում ծրագրերը:

«Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող Մատենադարանի հին ձեռագրերի ինստիտուտի նոր մասնաշենքի 4-րդ փուլի շինարարական աշխատանքների իրականացում ծրագիրը:

Գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության միջնակարգ դպրոցներին եւ աշակերտներին» ծրագիրը:

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երեւանի Նոր - Նորք թիվ 3 մանկապարտեզի խոհանոցի նորոգման» եւ «Վանաձորի «Տարոն - 3» թաղամասի համայնքային կենտրոնի ջեռուցում» ծրագրերը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ամրակից համայնքի մանկապարտեզի համար խաղահրապարակի ձեռքբերում», «Խաղահրապարակի կառուցում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սառնակունք, Աղիտու, Լոր ու Հարժիս համայնքների մանկապարտեզների բակերում» եւ «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում եւ Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագրերը:

«Առողջապահության համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիրը:

«Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն» ծրագիրը:

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագիրը:

Ð»é³Ëáë/ ü³ùëª (374 10) 52-87-12,
Phone/Fax: (374 10) 52-87-12
¾É.÷áë ï ª press@gov.am
Î³Ûù¿ç՝ www.gov.am

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր։